

**Կոտայքի մարզպետարանում գործող գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի 2014թ. հունվարի 18-ին կայացած նիստի**

Ս/թ հունվարի 18-ին կայացավ Կոտայքի մարզպետարանում գործող գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նիստը՝

**նախագահությամբ՝ Ա.Պետրոսյանի  
քարտուղարությամբ՝ Ա.Գաբրիելյանի**

**Մասնակցությամբ՝**

- Ա.Ղազարյան – ՀՀ կոտայքի մարզպետի տեղակալ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով
- Ա.Պետրոսյան – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի պետ
- Ա.Գաբրիելյան – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի քարտուղար, Հրազդանի քաղաքապետի օգնական
- Ա.Աղոյան – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի քաղաքացիական նախաձեռնությունների Կոտայքի մարզային կենտրոնի ղեկավար
- Զ.Բուրուչյան – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ
- Մ.Պետրոսյան – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
- Ա.Մելքոնյան – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, <<Հայ օգնության միություն>> հասարակական կազմակերպության անդամ
- Զ.Ուլանյան – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, կանանց հանրապետական խորհրդի Հրազդանի մասնաճյուղի նախագահ
- Կ. Հարությունյան – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջին կարգի մասնագետ

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի անդամներից 8-ը, բացակայում էին 3-ը:  
Հրավիրյալի կարգավիճակով նիստին մասնակցում էին ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետներ՝ Ն.Խչոյանը, Հ. Հալաբյանը, Լ.Մերգոյան:

**Օրակարգ**

**1. Գենդերային քաղաքականության և ընդդեմ գենդերային բռնության ռազմավարական և ազգային ծրագրերի ու գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի 2013թ. ընթացքում կատարած աշխատանքների ամփոփման և հաշվետվություն ներկայացնելու մասին**

*/գեկուցող՝ գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի պետ Ա.Պետրոսյան /*

Ա.Պետրոսյանը ներկայացրեց, որ համաձայն ՀՀ Կոտայքի մարզպետի 2012թ. օգոստոսի 03-ի N297-Ա որոշման 6-րդ կետի Ձեզ եմ ներկայացնում տեղեկատվություն մարզպետարանի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի 2013թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին:

Մեկ անգամ ևս հիշեցրեց, որ հանձնաժողովը առաջին կիսամյակի արդյունքները ամփոփել է և այժմ իմ ձեռքի տակ է նաև այն միջոցառումների ամփոփագիրը, որ հասցվել է արվել երկրորդ կիսամյակի ընթացքում:

- **27.09.2013թ.** - Մարզխորհրդի նիստ՝ ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման խնդիրների և համայնքային մակարդակում հետագա անելիքների մասին:(Ա.Պետրոսյան)
- **28.09.2013թ.** - <<Իրավական տեղեկատու կանանց համար>> երկրորդ լրամշակված հրատարակությանը նվիրված կյոթ սեղան՝ կազմակերպված <<Ժողովրդավարության և իրավունքի կենտրոնի>> ՀԿ-ի ու <<Միջազգային համագործակցության գերմանական ընկերություն>> ՍՊԸ-ի կողմից:(Ա.Պետրոսյան, Հ. Հալաբյան, Ն.Խչոյան)
- **10-12.12.2013թ** - << Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակին>> նվիրված քարոզարշավի շրջանակներում կյոթ սեղանի կազմակերպում:
- **10-12.12.2013թ.** - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի հետ համատեղ ս.թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կազմակերպում է մարզպետարաններում ստեղծված գենդերային հարցերով մշտական հանձնաժողովների վերապատրաստում՝ հանձնաժողովների անդամների գենդերային կարողությունների հզորացման, գենդերային գիտելիքների բարձրացման նպատակով:



Ա.Պետրոսյանը ներկայացրեց նաև պետական ծրագրերի շրջանակներում կատարած աշխատանքների հաշվետվությունը, որ պետք է ներկայացվի լիազոր մարմին (կցվում է):

**Արտահայտվեցին** հանձնաժողովի անդամներ՝ **Ա.Գաբրիելյանը, Ա.Աղոյանը և Զ.Բուրուշյանը՝** նշելով, որ անցած հաշվետու տարում կատարած աշխատանքները գնահատելի են և 2014թ. ընթացքում կարևորվում է համայնքներում գենդերային հավասարության առումով աշխատանքների արդյունավետության բարձրացումը: Գաբրիելյանը ներկայացրեց անելիքները կապված գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի վերապատրաստումների առումով, իսկ Բուրուշյանը շեշտեց, որ դեռևս շատ համայնքներում չեն ձևավորվել գենդերային հացերով զբաղվող աշխատանքային խմբեր, կազմակերպչական անելիքներ կան նաև վարչապետի կողմից սահմանված 2014թ. <<Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> մրցանակաբաշխությանը մասնակցության և մրցանակային տեղեր գրավելու համար:

Ամփոփելով նիստը Ա.Պետրոսյանը մեկ անգամ ևս հիշեցրեց գենդերային հավասարությունն ապահովելու և խտրականությունը կանխելու նպատակով ընդունված ռազմավարություններն ու օրենքները պետք է կիրառվեն բոլոր մակարդակներում: Համայնքային մակարդակում դրանց կիրառումն ավելի կարևոր է և ավելի բարդ, քանի որ պահանջում է համայնքային, մարզային և պետական մակարդակների համատեղ գործունեություն և պետք է հաշվի առնվեն յուրաքանչյուր համայնքում բոլոր կանանց ու տղամադկանց կարիքները:

Համայնքային մակարդակում գենդերային հավասարության ապահովման հիմնական գործիքը կանանց և տղամարդկանց իրավահավասարության գործողությունների ծրագիրն է: Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր համայնք մշակի իր գործողությունների ծրագիրը՝ հիմնվելով համայնքի կարիքների, հնարավորությունների և ռեսուրսների վրա:

**Որոշեցին՝** հանձնաժողովի կատարած աշխատանքը 2013թ ընթացքում գնահատել բավարար (անցավ միաձայն) և լիազոր մարմին ուղարկել պետական ծրագրերի շրջանակներում կատարած աշխատանքների հաշվետվությունը:

Հանձնաժողովի նախագահ՝  Ա. Պետրոսյան  
Հանձնաժողովի քարտուղար՝  Ա. Գաբրիելյան